# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
# ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ԳՀԾՁԲ-20-7/14-1

ք. Երևան 09. 06.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ՖԱԷՌԻՔՍ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 2502000 (երկու միլիոն հինգ հարյուր երկու հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 10.12.2020թ.:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ **ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ**, որտեղ՝

**ՎԳ**-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

**ՄԳ**-ն -13500 ՀՀ դրամ.

**ՆԳ**-ն - 14040 ՀՀ դրամ.

**Ծ**-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

**Ք**-ն մատուցված ծառայության քանակն է:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան

պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **10** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 և Ա հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ՖԱԷՌԻՔՍ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ՀՀ, գ.Փարաքար, Մայրաքաղաքային 1149 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | ԷՎՈԿԱԲԱՆԿ ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | ՀՀ 1660003856080100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 04725152 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ | տնօրեն |
| Ն. ՅՈԼՉՅԱՆ | Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |

**Հավելված N 1**
**N ԳՀԾՁԲ-20-7/14-1 պայմանագրի**

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Հ/Հ | ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇԸ |
|---|---|---|
| | 1 | 2 |
| 1 | ԿՐԱԿՄԱՐԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ | ԿՓ-2 տեսակի կրակմարիչների վերալիցքավորում և նորոգում (հատուկ մասերի փոխարինում): Դատարկվում է կրակմարիչի միջի փոշին: 2,4 ՄՊա ճնշմամբ սահմանված կարգով ստուգվում է կրակմարիչի իրանի պիտանելիությունը, անհրաժեշտության դեպքում կատարվում է հատուկ մասերի՝ փական, մանոմետր, փողակի փոխարինում, որից հետո լիցքավորում կրակմարման A, B, C, E դասերի հրդեհների մարման համար նախատեսված նոր փոշիով: Վերալիցքավորված կրակմարիչի տեխնիկական պայմանները պետք է համապատասխանեն գործարանային թողարկման պայմաններին՝ լիցքի քաշը՝ 2±0.1կգ, լիցքավորված կրակմարիչի կշիռը՝ 3±0.4 կգ, աշխատանքային ճնշումը կրակմարիչի իրանի մեջ՝ 1.2-1.6 ՄՊա: Պիտակավորվում է, լրացվում և կրակմարիչին ամրացվում է լիցքավորման ամիսն, տարեթիվը և վերանորոգման ու լիցքավորման երաշխիքը (1 տարի) այնուհետև կապարակնքվում:<br>Կրակմարման փոշին հատկացվում է գնորդի կողմից, այն ավարտվելուց հետ ԿՓ-2 կրակմարիչները լիցքավորվում են կազմակերպության կողմից:<br>ԿՓ-5 տեսակի կրակմարիչների վերալիցքավորում և նորոգում (հատուկ մասերի փոխարինում): Դատարկվում է կրակմարիչի միջի փոշին: 2,4 ՄՊա ճնշմամբ սահմանված կարգով ստուգվում է կրակմարիչի իրանի պիտանելիությունը, անհրաժեշտության դեպքում կատարվում է հատուկ մասերի՝ փականի և մանոմետրի փոխարինում, փողրակի փոխարինում կամ վերանորոգում, որից հետո լիցքավորում կրակմարման A, B, C, E դասերի հրդեհների մարման համար նախատեսված նոր փոշիով: Վերալիցքավորված կրակմարիչի տեխնիկական պայմանները պետք է համապատասխանեն գործարանային թողարկման պայմաններին՝ լիցքի քաշը՝ 5±0.25կգ, աշխատանքային ճնշումը կրակմարիչի իրանի մեջ՝ 1.2-1.6 ՄՊա: Պիտակավորվում է, լրացվում և կրակմարիչին ամրացվում է լիցքավորման ամիսն, տարեթիվը և վերանորոգման ու լիցքավորման երաշխիքը (1 տարի) այնուհետև կապարակնքվում:<br>ԿՓ-8 տեսակի կրակմարիչների վերալիցքավորում և նորոգում (հատուկ մասերի փոխարինում): Դատարկվում է կրակմարիչի միջի փոշին: 2,4 ՄՊա ճնշմամբ սահմանված կարգով ստուգվում է կրակմարիչի իրանի պիտանելիությունը, անհրաժեշտության դեպքում կատարվում է հատուկ մասերի՝ փականի և մանոմետրի փոխարինում, փողրակի փոխարինում կամ վերանորոգում, որից հետո լիցքավորում կրակմարման A, B, C, E դասերի հրդեհների մարման համար նախատեսված նոր փոշիով: Վերալիցքավորված կրակմարիչի տեխնիկական պայմանները պետք է համապատասխանեն գործարանային թողարկման պայմաններին՝ լիցքի քաշը՝ 8±0.25կգ, աշխատանքային ճնշումը կրակմարիչի իրանի մեջ՝ 1.2-1.6 ՄՊա: Պիտակավորվում է, լրացվում և կրակմարիչին ամրացվում է լիցքավորման ամիսն, տարեթիվը և վերանորոգման ու լիցքավորման երաշխիքը (1 տարի) այնուհետև կապարակնքվում:<br>ԱԿ-2 տեսակի կրակմարիչների վերալիցքավորում և նորոգում (հատուկ մասերի փոխարինում): Դատարկվում է կրակմարիչի միջի պարունակությունը: 22,5 ՄՊա ճնշմամբ սահմանված կարգով ստուգվում է կրակմարիչի իրանի պիտանելությունը, կատարվում է կրակմարիչների հատուկ մասերի՝ փական, փողակի փոխարինում, որից հետո լիցքավորում ածխաթթվային գազով: Վերալիցքավորված կրակմարիչի տեխնիկական պայմանները պետք է համապատասխանեն գործարանային թողարկման պայմաններին՝ լիցքի քաշը՝ 2±0,1կգ, աշխատանքային ճնշումը կրակմարիչի իրանի մեջ՝ 5,8±01 ՄՊա: Պիտակավորվում է՝ լրացվում և կրակմարիչին ամրացվում է լիցքավորման ամիսն, տարեթիվը և վերանորոգման ու լիցքավորման երաշխիքը (1 տարի) այնուհետև կապարակնքվում: |

Ծանոթություն՝ 1. Վերալիցքավորման, նորոգման (հատուկ մասերով փոխարինելու) ծառայությունը իրականացվում է ծառայությունը մատուցող կազմակերպությունում: Կրակմարիչների լիցքավորման վայր և հակառակ ուղղությամբ տեղափոխումը կազմակերպվում և իրականացվում է զորամասի կողմից: Պատվիրատուի կողմից կարգարգերը տրվում են ծառայությունը մատուցողին՝ պայմանագրի կնքումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2020թ. սեպտեմբերի 1-ը: Կարգագիրը ստանալուց հետո ծառայությունը մատուցվում է առնվազն մեկ ամսում (30 օր):

2. Հայտում նշված ծառայությունների համար անհրաժեշտ է հավաստագիր, որ վերալիցքավորված և նորոգված կրակմարիչները պիտանի են միանգամյա օգտագործման: Հավաստագիրը ներկայացնում է ծառայությունը մատուցող կազմակերպությունը:

3. Տեղադրվող պահեստամասերը պետք է լինեն նոր և չօգտագործված: Մեկ տարվա ընթացքում, կազմակերպությունը պատասխանատու է կատարված ծառայության որակի համար: Նշված ժամանակահատվածում վերանորոգված կրակմարիչների անսարքությունների ի հայտ գալու դեպքում, ծառայությունը մատուցող կազմակերպությունը **պարտավոր է** իր միջոցների հաշվին վերացնել անսարքությունները:

4. ԿՓ-2 տեսակի կրակմարիչների վերալիցքավորման Վեկսոն ԱԲՍ-25 տեսակի կրակմարման փոշին հատկացվում է գնորդի կողմից, ք. Երևան Արցախի 61 հասցեից, առբերումը իրականացվում է ծառայությունը մատուցող կազմակերպության ուժերով, իսկ փոշու վերջանալուց հետո ԿՓ-2 տեսակի կրակմարիչների կրակմարիչների փոշով վերալիցքավորումը իրականացվում է կազմակերպության կողմից՝ տեխ. բնութագրով նախատեսված փոշով:

5. Կրակմարիչների հետագա շահագործման պիտանելիության, հատուկ մասերով փոխարինելու և/կամ նորոգելու անհրաժեշտությունը (աշխատորոշումը) որոշում է վերալիցքավորման ծառայությունը մատուցող կազմակերպության մասնագետը՝ տվյալ կրակմարիչը ներկայացրած զորամասի ներկայացուցչի ներկայությամբ:

6. Կրակմարիչների հատուկ մասերի փոխարինումից հետո, փոխարինված (վնասված) մասերը պարտադիր հանձնվում է այն զորամասի ներկայացուցչին, որտեղից որ ներկայացվել է կրակմարիչը:
7. Ծառայություն մատուցող կազմակերպության մասնագետի կողմից կատարված զննման արդյունքում խոտանված կրակմարիչները տարբերակվում են (կրակմարիչի իրանը ծակելու միջոցով)՝ հետագա շահագործումից հանելու նպատակով:

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/Հ | Գնման ենթակա ծառայությունների անվանումը | Հ/Մ | Քանակը | Առավելագույն գինը (ՀՀ դրամ) | Մատուցումը 2020թ-ին՝ ըստ եռամսյակների |
|---|---|---|---|---|---|
| 1 | կրակմարիչների վերալիցքավորման ծառայություններ | դրամ | 1 | 2502000 | Ծառայության մատուցումը 2020թ. 2-րդ և 3-րդ եռամսյակների ընթացքում, ըստ ՀՈՒ ԹՎ հրդեհային անվտանգության ծառայության կարգագրերի |

**Հավելված N 2**
**N ԳՀԾՁԲ-20-7/14-1 պայմանագրի**

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | Գնման ենթակա ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2020թ. պետական բյուջեից ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ. ընդ որում | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | կրակմարիչների վերալիցքավորման ծառայություններ | 2502000 | 2502000 | 2502000 | 2502000 | 2502000 | 2502000 |

**Ծանոթություն՝** CPV կոդը՝ 50611200/1:
** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՖԱԷՌԻՔՍ» ՍՊԸ տնօրեն

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված Ա

| Հ/հ | Միասնական անվանացանկի CPV կոդը | ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Չ/մ | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր առավելագույն գումարը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 50611200/1/10/1 | Կրակմարիչների վերալիցքավորման ծառայություններ | դրամ | | 2.502.000 |
| 1.1 ԿՓ-2 տեսակի կրակմարիչների վերալիցքավորում և նորոգում (հատուկ մասերի փոխարինում), լիցքավորման փոշին գնորդի կողմից | | | | | |
| 1 | | Մանոմետր՝ փոխարինում նորով | հատ | 280 | |
| 2 | | Փողակ՝ փոխարինում նորով | հատ | 224 | |
| 3 | | Փական՝ փոխարինում նորով | հատ | 280 | |
| 4 | | Լիցքավորման աշխատանք (նաև ազոտով լիցքավորումը) | հատ | 280 | |
| 4 | | Լիցքավորման աշխատանք (նաև կրակմարման փոշիով և ազոտով լիցքավորումը) | հատ | 1600 | |
| 1.2 ԿՓ-5 տեսակի կրակմարիչների վերալիցքավորում և նորոգում (հատուկ մասերի փոխարինում) | | | | | |
| 1 | | Մանոմետր՝ փոխարինում նորով | հատ | 280 | |
| 2 | | Փողրակ՝ փոխարինում նորով | հատ | 952 | |
| 3 | | Փողրակ՝ վերանորոգում | հատ | 112 | |
| 4 | | Փական՝ փոխարինում նորով | հատ | 280 | |
| 5 | | Լիցքավորման աշխատանք (նաև կրակմարման փոշիով և ազոտով լիցքավորումը) | հատ | 3200 | |
| 1.3 ԿՓ-8 տեսակի կրակմարիչների վերալիցքավորում և նորոգում (հատուկ մասերի փոխարինում) | | | | | |
| 1 | | Մանոմետր՝ փոխարինում նորով | հատ | 280 | |
| 2 | | Փողրակ՝ փոխարինում նորով | հատ | 952 | |
| 3 | | Փողրակ՝ վերանորոգում | հատ | 112 | |
| 4 | | Փական՝ փոխարինում նորով | հատ | 280 | |
| 5 | | Լիցքավորման աշխատանք (նաև կրակմարման փոշիով և ազոտով լիցքավորումը) | հատ | 2128 | |
| 1.4 ԱԿ-2 տեսակի կրակմարիչների վերալիցքավորում և նորոգում (հատուկ մասերի փոխարինում) | | | | | |
| 1 | | Փողակ՝ փոխարինում նորով | հատ | 1680 | |
| 2 | | Փական՝ փոխարինում նորով | հատ | 280 | |
| 3 | | Լիցքավորման աշխատանք (նաև ածխաթթու գազով լիցքավորումը) | հատ | 840 | |
| | | ԸՆԴՀԱՆՈՒՐ | | 14,040.0 | |
| | | | | | |

**Ծանոթություն. ԿՓ-2 տեսակի կրակմարիչների վերալիցքավորման Վեկսոն ԱԲՍ-25 տեսակի փոշին կհատկացվի գնորդի կողմից՝ ծառայությունը մատուցող կազմակերպությանը: Գնորդի կողմից կրակմարիչների վերալիցքավորման համար հատկացված փոշու վերջանալուց հետո մատակարարը ԿՓ-2 տեսակի կրակմարիչները պետք է լիցքավորի տեխ. բնութագրում նախատեսված փոշիով:**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՖԱԷՌԻՔԱ» ՍՊԸ տնօրեն

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Հավելված N 3**
**N ԳՀԾՁԲ-20-7/14-1 պայմանագրի**

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«  » «  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դրվագ գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

**Հավելված N 3.1**
**N ԳՀՄԶԲ-20-7/14-1 պայմանագրի**

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն